դու գնա: Այդ օրը Տիրոջ համբարձման օրն էր: Հայրապետը իր բոլոր ինչքը ութ օր առաջ ուղարկել էր Արտաբիլ, իսկ այդ օրը իր անձնական գույքը երկու բեռ ուղարկել էր Եղվարդ գյուղը և ասաց՝ սպասիր ջրի ափին և նայիր ինձ: Իսկ ինքը կեսօրին հեծավ իր ջորին և առաջ գցելով Վարդան սուրհանդակին, հիշեց Հիսուս Քրիստոսի անունը, բարեբանեց տոնը և ելավ ճանապարհ: Նորագեղի վերևը գնաց առապար ճանապարհով: Արեգակի մայրամուտի մոտիկ հասավ Եղվարդ: Այնտեղից վերցրեց երկու քաջասիրտ և աներկյուղ հրացանավոր մարդիկ և նրանց հետ գնաց Նիգ գավառը՝ Ձորաբերան գյուղը, որ այժմ կոչվում է Գուլավտի[149], այնտեղից էլ առնելով Եավրի անունով մի բարեպաշտ մարդ՝ անցավ Տաշիր[150], գնաց Լոռի՝ Դսեղ գյուղը[151]: Այնտեղից էլ երեք մարդ վերցրեց, եղան շատ և անցան գնացին Աղվանքի կողմերը՝ Բարկուշատ[152] մինչև պարսից սահմանները և հասան Արդաբիլ: Առնելով իր ունեցվածքը, որ նախապես ուղարկել էր, ելավ այնտեղից գնաց, հասավ Սպահան: Եվ այսպես ազատվեց և մնում էր Սպահանում: Իսկ մահմեդականը, որ հսկում էր նրան, եկավ Անապատ, տեսավ, որ այնտեղ չէր, գնաց իջևան կարավանի մեջ, բայց նրան չտեսավ: Գնաց Էջմիածին, հարցրեց, ոչ ոք չգիտեր նրան: Դարձավ, եկավ Երևանի Անապատը, այլևս չկար: Այնտեղ կար Հակոբ անունով ջուղայեցի մի սարկավագ Բհամ մականունով: Սա ասում է՝ ահա նա փախել է, արի մենք էլ փախչենք, որպեսզի մեզ չնեղեն: Աբասն ասում է՝ դու միայնակ ես, եթե փախչես, կարող ես, իսկ ես ինչպե՞ս փախչեմ, որովհետև իմ տունը կավարեն. գնալու եմ խանին ասեմ:

Խանը Կոտայք գավառում աղբյուրների[153] ակների մոտ էր, որ կոչվում են Ղըռխ-բուլաղ, որ նշանակում է քառասուն աղբյուր, այնտեղ ապահով էր: Աբասը գնաց, խանին պատմեց: Նա գիտեր, որ իր համար վատ եղավ նրա փախուստը: Աբասի վրա բարկացավ և նրանից երեսուն թուման տուգանք առավ: Այնտեղ թողեց հարճերին, ինքը միաձի զորքով ելավ գնաց Երևան: Մարդիկ ուղարկեց բոլոր վանքերն ու անապատները, գյուղերը որոնելու և ստորագրություն առնելու ամեն մեկից, որ ով տեսնի նրան, բռնի, բերի իր մոտ: Շրջեցին ամբողջ երկիրը, բայց վերադարձան դատարկ:

Ապա արագագնաց սուրհանդակներ ուղարկեց բոլոր կողմերը, Վրաստան, Գանձակ, Թավրիզ, Նախիջևան, Խոյ, Կարս, Ախալցխա և այլ կողմեր, գնացին, բայց նրան չտեսան. եթե տեսան էլ, հորդորեցին նրան հեռանալ:

Սրանից հետո հավաքեց բոլոր վանքերի առաջնորդներին, գյուղերի տանուտերերին, գավառապետերին, բոլոր մեծամեծերին Երևան քաղաքում, ինքը բազում ամբաստանություններ, ինչ չարիքներ, որ ինքը արել էր, այդ ամենը բարդեց կաթողիկոսի վրա և արագագնաց սուրհանդակի ձեռքով ուղարկեց շահին և պատվիրեց, որ չտեսնի եպարքոսին, որովհետև իմ թշնամին է, ասաց:

Սուրհանդակը գնաց, ուրիշի ձեռքով գրությունը հասցրեց շահին: Մինչդեռ շահը կարդում էր գրությունը, եպարքոսը ներս մտավ. գրությունը տվեց նրան: Գրության կեսը կարդաց և ասաց՝ Սաֆիդուլի խանը երկիրը քանդում է, ինքը իր արած վնասները դնում է սնագլուխների վրա. գրությունը պատռեց, գցեց կրակը, որ մատուցարանով դրված էր ծխելու համար:

Իսկ երբ կաթողիկոսը հասավ Սպահան, նախ գնաց եպարքոսի մոտ և նրան պատմեց այն ամենը, որ քաշեց խանի ձեռքից, և հունաց երկրի գործերը: Իսկ եպարքոսը ասաց՝ աղերսագիր գրիր, ինչ որ կամենում ես, և ես այն կտամ շահին: Իսկ նա գնաց, նախապատրաստեց հիսուն ոսկին, որ սահմանված էր. առաջին կաթողիկոսները սահմանել էին շահին վճարել արքունական հրամանի համար: Ապա իր այցի այգորանքաղրամը նորոգ թագավորին, սաթից մոմակալ, մարջանից մարդու պատկեր, տասական ոսկի, ոսկի ժամացույց և այլ պատշաճավոր բաներ: Գրեց նաև գանգատագիր խանից, որի պատճենը հետևյալն է. թե ի բնե ամբողջ հայոց ազգը, ուր էլ լինի՝ թե օսմանցիների երկրում, թե ֆրանկների, թե հնդիկների, թե Մոսկվայի, և ուր էլ գտնվի ազգից որևէ մեկը, բոլորը հնազանդվում են Էջմիածնին, որը քո տերության է ենթակա: Ըստ մեր օրենքի հարկեր են տալիս Էջմիածնի բնակիչներին, իսկ սրանք էլ արքունական հարկերն են տալիս: Մեր ժամանակ օսմանցիների երկրում վերացրին այն և չէին կամենում տալ, թագավորական հրամանով վերացրին այն, իսկ մենք հույս դրինք Շահ Սաֆու տան վրա և գնացինք թուրքաց թագավորի մոտ մեծ պարգևներով ու չարչարանքներով, թագավորի հրամանագրով հազիվ կարողացանք դարձնել քո տերության ենթակա: Երբ եկանք մեր երկիրը, ինչ որ արժանի էր, աղերսեցինք խանին և նրանից թույլտվություն